




ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
Լանդշաֆտի կոնվենցիա. Կրթական բաղադրիչ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մանկավարժական գրքույկի շնորհանդես
Լանդշաֆտային կրթական գործունեությունն տարրական դպրոցների համար

Yerevan, Republic of Armenia
8-10 June 2022

COUNCIL OF EUROPE
Landscape Convention. Educational component
NATIONAL CONFERENCE
Presentation of a pedagogical booklet
Landscape educational activities for primary schools




Լանդշաֆտը դա մարդու կողմից ընկալվող տարածք է, որի հատկությունները բնական և մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք են, կյանքի որակի, անհատական և սոցիալական բարեկեցության և երկրի կայուն զարգացման երաշխիք են:

✓ *Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան ստորագրվել է 2000 թ. հոկտեմբերի 20-ին Ֆլորենցիայում*

✓ *Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվել է 2003 թվականի մայիսի 4-ին*

✓ *ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացվել է 2004 թվականի մարտի 9-ին*

A vibrant, stylized illustration of a landscape. In the foreground, a group of people, mostly women wearing headscarves, are gathered near a river. The river flows through the center of the image. On the right bank, there are several large, rounded trees with green foliage. In the background, a large, multi-story building with a red roof is visible, surrounded by more trees and a hilly landscape. The sky is a mix of blue and yellow, suggesting a bright, sunny day. The overall style is reminiscent of mid-20th-century modernist art, with bold colors and simplified forms.

Լանդշաֆտների երեք՝ յուրահատուկ,
սովորական և դեգրադացված տեսակներն
էլ պահանջում են համապատասխան
գործողություններ այն է՝ խթանել
լանդշաֆտի,

- **պահպանության** (առավելապես
վերաբերում են արժեքավոր
լանդշաֆտներին),
- **կառավարման** (բոլոր տեսակի
փոփոխությունների նկատմամբ) և
- **պլանավորման** գործընթացը (նոր
լանդշաֆտների ստեղծման
նկատմամբ):

Հոդված 6 Հատուկ միջոցառումներ

Ա. Իրազեկության բարձրացում

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է բարձրացնել քաղաքացիական հասարակության, մասնավոր կազմակերպությունների և իշխանության մարմինների իրազեկությունը լանդշաֆտի արժեքի, դերի և փոփոխությունների մասին:



Բ. Ուսուցում և կրթություն

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է խրախուսել՝

ս) մասնագետների պատրաստումը՝ լանդշաֆտի գնահատման և այլ գործառնություններով զբաղվելու համար,

բ) լանդշաֆտային քաղաքականության, լանդշաֆտի պահպանության, կառավարման ու պլանավորման մուլտիդիսցիպլինար ծրագրերի մշակումը մասնավոր և պետական հատվածների մասնագետների ուսուցման համար,

գ) դպրոցական և համալսարանական դասընթացների նախապատրաստումը, որոնք համապատասխան առարկաներում բացահայտում են լանդշաֆտների արժեքը և հիմնախնդիրները՝ կապված դրանց պահպանության, կառավարման և պլանավորման հետ:



Գ. Նույնացում և գնահատում

1. Շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ, ինչպես նախատեսված է 5-րդ հոդվածում, և լանդշաֆտների մասին գիտելիքների ամրապնդման նպատակով յուրաքանչյուր Կողմ նախաձեռնում է.

ա) 1. իրականացնել իր ամբողջ տարածքում լանդշաֆտների նույնացումը,
2. վերլուծել դրանց հատկություններն ու դրանք ձևափոխող ուժերն ու գործոնները,

3. նկատի առնել փոփոխությունները,

բ) գնահատել նույնացված լանդշաֆտը՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի և բնակչության կողմից առանձնացված արժեքները:

4. Այդպիսի դասակարգման և գնահատման գործընթացները պետք է ուղեկցվեն Եվրոպայի մակարդակով կազմակերպվող՝ Կողմերի միջև փորձի ու մեթոդների փոխանակությամբ՝ 8-րդ հոդվածի համաձայն:

**<<Լանդշաֆտների պլանավորումը>> հաստատուն գործողություն է, ուղղված
լանդշաֆտների հեռանկարային զարգացման, վերականգնման, կազմավորման
(ստեղծման) կանխորոշմանը:**

Ուստի , տարածական պլանավորման տեղական մակարդակում լանդշաֆտային
կազմակերպման խնդիրներում դիտարկվելու են ոչ միայն պահպանության ենթակա
արժեքավոր բնական և մշակութային տարածքներն ու գեղատեսիլ բնապատկերները, այլև.

- **սովորական առօրյա միջավայրը,**
- **լքված անօգտագործելի տարածքները,**
- **դեգրացված հողամասերը և այլն`**

Նախապես գնահատելու նախատեսվող անտրոպոգեն ազդեցություններից ակնկալվող
բացասական ազդեցությունները բնական լանդշաֆտների վրա, ինչպես նաև գնահատելու
արդեն իսկ նշված ազդեցությանը ենթարկվածների առկա վիճակը և յուրաքանչյուր տեակի
համար առաջադրելով լանդշաֆտային գործողությունների համապատասխան ոլորտը:

■ **Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակներում**
իրականացվող համալիր վերլուծության ու գնահատականի առարկա են հանդիսանում
բնական և մարդածին լանդշաֆտների բոլոր հիմնական բաղադրիչները.

■ **Տարածքի առկա իրավիճակի ուսումնասիրությունը, վերլուծությունը և համալիր**
գնահատականը, տարածքի հեռանկարային զարգացումը /որակյալ լանդշաֆտներ
ունենակու ձգտումը/, դրան հասնելու համար պահպանության, կառավարման և
պլանավորման գործողությունների համակարգը կազմում են տարածական
պլանավորման հիմքը:

■ **Տարածական պլանավորման փաստաթղթերի մասն են կազմում լանդշաֆտների**
համալիր վերլուծությունը և գնահատականը, լանդշաֆտային կազմակերպման
խնդիրները, արժեքավոր լանդշաֆտների պահպանությանն ուղղված միջոցառումները:

■ **Լանդշաֆտային բաղադրիչն առկա է բոլոր մակարդակների /ազգային, տարածքային և**
տեղական/տարածական պլանավորման փաստաթղթերում:



Բնական լանդշաֆտներ Ուրբանիզացված լանդշաֆտներ Դեգրադացված լանդշաֆտներ



ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N308-Ն որոշմամբ հաստատված Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող միջոցառումներ

Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման 2011-2012 թվականների միջոցառումների ցանկով նախատեսված կետերի կատարման շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակվել են մի շարք իրավական ակտեր, ուղղված Հայաստանում

- լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարության հաստատմանը,
- լանդշաֆտի ազգային մրցանակի սահմանմանը,
- Հայաստանի համար կարյոր նշանակություն ունեցող տարածաշրջանների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակմանը:



Սահմանվել է Լանդշաֆտի Մրցանակ

- ՀՀ կառավ. 2012 թ. փետրվարի 16-ի N164-Ն որոշում

➤ Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակը պատվավոր պարգևատրում է, որը շնորհվում է Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման շրջանակներում արդյունավետ և տեսանելի արդյունք ունեցող գործունեության համար:



➤ ԵՒ-ի աջակցությամբ
ճարտարապետության
թանգարանում
կազմակերպվել է
«Լանդաֆտը
երեխաների աչքերով»
մանկական
աշխատանքների
հանրապետական
ցուցահանդես:
Երեխաների
աշխատանքները
ցուցադրվել են նաև
Ստրասբուրգի՝
Եվրոպայի պալատում

Սմբատաբերդ, Վայոց Ձորի մարզ, ՀՀ

Նորավանք Նորավանք (Ամաղու
Նորավանք)



Thanks for your attention

Շնորհակալություն ուշադրության համար

